ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «----------» 2010թ. N ---- -Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝

*Երևան քաղաքի ավագանին որոշում է.*

1. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2010 թվականի երկրորդ եռամսյակում հատկացնել 40,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի վարչական շրջանների սոցիալական և բարեկարգման ծրագրերին աջակցելու նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով։
2. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հատկացված գումարի բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների և ստացող կազմակերպությունների։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի վարչական շրջաններում պարբերաբար առաջանում են սոցիալական բնույթ կրող, ինչպես նաև բարեկարգման և վերանորոգման առօրյա խնդիրներ, որոնք անհապաղ լուծումներ են պահանջում, որոնց համար բյուջեում ծախսային ուղղություններ չեն նախատեսվել: Միաժամանակ, բյուջեում նմանատիպ ծախսային ուղղություններ նախատեսելու դեպքում խնդիրներ են առաջանում սահմանված ընթացակարգերի ժամկետների առումով, ինչպես նաև մի շարք ծրագրեր կարող են իրականացվել տարբեր կազմակերպությունների միջոցներով՝ համաֆինանսավորմամբ:

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևանի վարչական շրջաններում սոցիալական բնույթ կրող, ինչպես նաև բարեկարգման ծրագրեր իրականցնող կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնել վերոգրյալ դեպքերում լուծումներ տալու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 40,000.0 հազ. դրամ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**